



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

27 հունվարի 2022 թվականի թիվ 10-Ա

ք. Երևան

«ՖՐԻՆՅՈՒԶ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ՝ Հանձնաժողով) ուսումնասիրելով դիմումի հիման վրա 2022 թվականի հունվարի 19-ին հարուցված թիվ 1 վարչական վարույթի նյութերը՝ *պարզեց*.

2022 թվականի հունվարի 19-ին Հանձնաժողով մուտքագրված Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավոր Լիլիթ Գալստյանի դիմումում նշված է «Ֆրինյուզ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Հեռարձակող) կողմից հեռարձակվող «Ֆրի Նյուզ» տեսալսողական ծրագրի «Ազատ շփում Գնել Սարգսյանի հետ» տեսալսողական հաղորդման (այսուհետ՝ Հաղորդում) ընթացքում ատելության, խտրականության, անհանդուրժողականության և թշնամանք հրահրելու քարոզի լուրջ տարրեր պարունակելու փաստի վերաբերյալ:

Ըստ Պատգամավորի՝ Հեռարձակողի կողմից 2022 թվականի հունվարի 10-ին հեռարձակված Հաղորդման ընթացքում հաղորդավարի այսորակ քարոզները, որոնք եզակի չեն, *խորապես խաթարում են մեր հասարակության առանց այն էլ խոցելի արժեքային համակարգը և իր կարծիքով պարունակում քրեորեն հետապնդելի արարքներ*: Պատգամավորի կողմից ներկայացվել է նաև Հաղորդման մի մասի սղագրությունը՝ դիմումին կից հավելվածով, որտեղ նշված է.

«Իսկ եղ նույն դաշինքը խոսում ա, թե տեսեք Վարդենիսի անվտանգային թեմաներից. Տո Դուք ուր, հայրենիքն ուր, ախր: Ձեր հայրենիքը կարծես թե լրիվ ուրիշ տարածական բաների մեջ ա գտնվում, կոորդինատների մեջ ա գտնվում:

Վստահ եմ, որ իմ, մեր..իմ, անձամբ իմ ու ձեր պատկերացրած հայրենիքը նույն անվանումը չունեն... Ես այլ անուն չեմ կարող այս ամեն ինչին տալ: Ու ցավոք սրտի, սրանց էս թեմայի շուրջ չես կարող ձերբակալել, հայ ժողովուրդը հիմա նստած կասեն, **բա ինչի դրանց չեն բռնում, սատկացնեն... Շա՛տ լավ կլիներ, է՛** : Այ իսկապես, սիրում են չէ ասեն՝ նիկոլը բռնապետա, այ շա՛տ լավ կլիներ է՛, որ նիկոլը ժամանակավոր վերածվեր բռնապետի... այո, շատ լավ կլիներ: Չէ, կարողա՞նք ախր ցավոք սրտի, պետության համար դարձյալ վատ կլիներ... բայց եթե բռնապետ լիներ, այ էս **սրանց նման ստահակները ուղղակի գոյություն չէին ունենա**: Բայց իրավական դաշտը էնքան թույլա, օրենքները էնքան գոյություն չունեն, որ դու ուղղակի չես կարող... երբ որ դու բերման ես ենթարկում պիտի օրենքի անուն ասես՝ ինչի՞ համար, իի՞... չկաա... չկաա, հասկանո՞ւմ եք. **այ էսպես անտեր**

երկիր են վերածած եղել էս երկիրը, որպեսզի փաթեթավորված նվիրեն այլ մի գերհզոր պետության, իրենք էլ դառնան գուրեռնատոր էստեղ. Իհարկե դա բոլորս ենք հիանալի գիտակցում: Ու ցավոք սրտի էդ ուժերը կարողացան դարձյալ այս ընտրություններում ձայներ հավաքել, հիմա իրենց քվեարկողներին ասեմ՝ վայելե՛ք այն, ինչ-որ ունենք:

Իսկ մենք դեռ կշարունակենք մեր պայքարը նաև այս դաշտում, վերջնականապես մաքրելու համար մեր երկիրը բոլոր քաղաքական ուժերի վատ, բացասական ներկայացուցիչներից, ովքեր որ կփորձեն ուղղակի վնաս հասցնեն մեր պետականությանը...»:

Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետով և հիմք ընդունելով Պատգամավորի դիմումը՝ 2022 թվականի հունվարի 19-ին Հեռարձակողի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի մասին 2022 թվականի հունվարի 21-ին ծանուցել է Հեռարձակողին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումները, բացատրությունները:

Հարուցված վարչական վարույթի ընթացքում Հեռարձակողը 2022 թվականի հունվարի 26-ին ներկայացված գրավոր բացատրության մեջ նշված է հետևյալը.

Համաձայն «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ սույն օրենքի նպատակն է՝ երաշխավորել կարծիքների արտահայտման իրավունքը: Նույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է տեսալսողական տեղեկատվության ազատ ընտրության, արտադրության ու տարածման իրավունքը: Տեսալսողական տեղեկատվության գրաքննությունն արգելվում է:

Հայաստանի Հանրապետությունում սահմանադրորեն երաշխավորվում է մամուլի, ռադիոյի, հեռուստատեսության և տեղեկատվական այլ միջոցների ազատությունը: Պետությունը երաշխավորում է տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանություն առաջարկող հանրային հեռուստատեսության և ռադիոյի գործունեությունը:

Կարծիքի արտահայտման ազատությունը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով (Հոդված 42):

Բացատրության մեջ նշված է նաև, որ վերոգրյալ իրավական նորմերի բովանդակային վերլուծությունից հետևում է, որ ազատ կարծիքի արտահայտումը կարող է սահմանափակվել բացառապես օրենքով. Եվ նշված պարագայում «Ազատ շփում Գնել Սարգսյանի հետ» տեսալսողական հաղորդաշարի շրջանակներում քաղաքական վերլուծություն իրականացնելիս պարզապես հնչեցվել են եզրահանգումներ և արտահայտություններ, որոնք չեն համարվում «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի խախտում:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

«ՖՐԻ ՆՅՈՒԶ» ՄՊ ընկերությունը Հանձնաժողովի 2021 թվականի հունվարի 15-ի թիվ 15-Ա որոշմամբ ճանաչվել է հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզավորման

մայրաքաղաքային սփռման մրցույթի հաղթող և վերջինիս տրամադրվել է Երևան քաղաքի տարածքում հանրային մուլտիպլեքսում սլոթի օգտագործման լիցենզիա:

«Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) համաձայն յուրաքանչյուր հեռարձակող պետք է ունենա էթիկայի կանոնագիր՝ միջազգային չափանիշների համաձայն ինքնուրույն կազմված փաստաթուղթ սեփական էթիկական նորմերի վերաբերյալ (Հեռարձակողը միացել է Հայաստանի զանգվածային լրատվության միջոցների էթիկայի դիտորդ մարմնին):

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը՝ իրականացնում է Հեռարձակողների և օպերատորների գործունեության մշտադիտարկում:

Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով, իսկ նույն հոդվածի 8-րդ և 9-րդ մասերը սահմանում են՝

«8. Մշտադիտարկման արդյունքներով կարգավորող պետական մարմնի ներկայացուցիչը մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ կազմում է արձանագրություն:

9. Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրության մեջ նշվում են մշտադիտարկման արդյունքների համառոտ շարադրանքը, ինչպես նաև վարչական վարույթ հարուցելու կամ հարուցված վարչական վարույթի համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստական հանգամանքները, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

Հանձնաժողովի կողմից ուսումնասիրվել է վարչական վարույթի մասնակցի կողմից ներկայացրած փաստերը և դեկլարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետով և 42-րդ հոդվածով Հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության կողմից իրականացվել է հեռարձակված Հաղորդման (հաղորդման տևողությունը՝ 20:44:31-21:28:49) ձայնագրության ուսումնասիրություն: Ինչպես նաև Պատգամավորի կողմից ներկայացված հավելվածի բովանդակությունը համադրվել է Հաղորդման ձայնագրության հետ և պարզվել է, որ դիմումին կից հավելվածով ներկայացված Հաղորդման հատվածը ընդհանուր առմամբ նույնական է Հաղորդման բովանդակության հետ: Սակայն Հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության կողմից Հաղորդման մշտադիտարկման արդյունքում տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրության խախտում չի արձանագրվել:

Այսպիսով, հաշվի առնելով այն փաստը, որ Հեռարձակողի կողմից տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրության խախտում չի իրականացվել, ուստի վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է, որ վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայության հիմքով Հեռարձակողի նկատմամբ հարուցված թիվ 1 վարչական վարույթը ենթակա է կարճման:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված է՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման հետևյալ հանգամանքների առկայության դեպքում՝

1) վարչական իրավախախտման դեպքի կամ կազմի բացակայությունը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը և 42-րդ հոդվածը, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին կետի դրույթները՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշեց**.

1. Կարճել «ՖրիՆյուզ» ՍՊ ընկերության նկատմամբ հարուցված թիվ 1 վարչական վարույթը:
2. Դիմել Հայաստանի զանգվածային լրատվության միջոցների էթիկայի դիտորդ մարմին՝ Հաղորդման ընթացքում հնչեցված արտահայտությունների վերաբերյալ մասնագիտական էթիկայի կանոնագրի նորմերին համապատասխանությունը պարզելու նպատակով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն վարչական վարույթի մասնակիցներին պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:
4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՑԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ

27 հունվարի 2022թ.
ք. Երևան